



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

N 297 – Ա

08 օգոստոսի 2019 թ.

**Բ Ա Ջ Մ Ա Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Խ Ո Ւ Մ Բ Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13 -ի N 751-Ն որոշմամբ հաստատված «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու կարգ»-ի 4-րդ գլխի 17-րդ և 18-րդ կետերի պահանջները կարգադրում եմ՝

1. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալու ցանկացող անձի տվյալների համադրում իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ստեղծել բազմամասնագիտական խումբ հետևյալ կազմով՝

- |                      |  |
|----------------------|--|
| Գալոյան Մամիկոն      | - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ                                     |
| Հովհաննիսյան Նորիկ   | - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, իրավագետ                |
| Խաչատրյան Սեդա       | - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, հոգեբան                 |
| Կոստանյան Արմինե     | - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետ, սոցիալական աշխատող |
| Աթեյան Խաժակ         | - մարզպետարանի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության տեղեկատվավերլուծական բաժնի վարիչ                |
| Համբարձումյան Մարիամ | - «Սոցիալական երկխոսություն» ՍՀԿ-ի նախագահ /համաձայնությամբ/   |

2. Բազմամասնագիտական խմբին՝ համադրումն իրականացնել <<խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու կարգ>>- ով սահմանված ժամկետում և պահանջներին համապատասխան:

08.08.2019



ՄԱՐԶՊԵՏ՝  
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ը. Գավառ